ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼԵՌԵՆՑԻ

ԱՄՊԸ

Չար հողմով զատուած իւր ընկերներից,
Մի կտոր ամպ մենակ հասաւ հեռուից,
Կապոյտ երկինքի վըրան կանգ առաւ
Եւ մտախոհութեան մէջ ընկղմեցաւ։

Գիշերն անցել էր. արեւելքն էր վառ.
Երկինքում կտոր ամպն այլ եւս չը կար,
Բայց տերեւների վրան կային փայլուն
Նորա արցունքի շիթերն դողդոջուն։

6 Հոկտեմբերի, 1891 Թ.

Մ.-ին

Քեզ մի՛ կշտամբիր, երբ դառըն ժամին,
Զայրացած մարդկանց անգեղ գործերից,
Չես կարողանում զսպել քո ոգին
Եւ անիծում ես աշխարհն վշտալից։
Դա՛ սէրն է խայթուած սրտումդ վրդովւում,
Դա՛ հպարտութիւնն է մարդկային անարգւում,
Դա՛ արդարութեան բողոքն է անյաղթ,
Որ անիծում է աշխարհըս անբաղդ։

Ժամերում մրուտյլ յուսահատութեան,
Անհանգիստ մոքի թունաւորութեան,
Տարտակուսանքի չարատանջ ժամում
Եւ առելութեան խիստ տագնապներում՝
Լքուած, դատնացած՝ ընկճւում ես ոգով,
Կրծքիդ վրայ բեռ՝ վրդհատում սրտով
Եւ եթէ հոգիդ ուզում է մի բան,
Դա է—մարդերի վերջին մութ կայան։

Բայց այդ հիւանդոտ չէ մի զառանցանք,
Այլ իղձն է քո մէջ այդպէս փոթորկում,
Իղձը՝ վերանալ մարդկան տառապանք
Եւ բարին տիրող տեսնել աշխարհում։
Կանցնեն ծանր ժամերն և ահա նորից
Հմայիչ ասաղի պէս՝ գաղափարն վրսեմ
Կը փայլէ աչքիդ. իբր արշալոյսից՝
Կը պարզուէ առջևդ հորիզոնն նրսեմ...

Ո՛չ, մի՛ կշտամբիր քեզ դասն ժամին,
Երբ խայթուած մարդկանց տրզեղ գործերից,
Ձեռ կարողանում զսպել քո ոգին
Եւ անիծում ես աշխարհն վշտալից.—
Քո մէջ կայ մարտի իղձը սուրբ, հրզօր
Եւ դուր չեն անցնիլ քո տանջանքն ու լաց—
Մէկ օր մարդկութիւնն կը լինի բաղդաւոր,
Թէև տեսնել այդ... քեզ չէ վիճակուած...

10 Նոյեմբերի, 1891 թ.